

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ

Posted on November 19, 2014 by Keghart

ԳՐԻԿ, ԵՐԵՎԱՆ, ԹԵՆԻՍԻՍԵՆԸ



ՀԱՅՐԵՆԻՔԻ
ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԵՎԿԻՆ
ՀԱՄԱԳՈՒՆՆԵՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ

Category: [Opinions](#)



Գրախոսություն

Դոկտ. **Արմենուհի Կոստանյան**, Մարբուրգ, Գերմանիա, 19 Նոյեմբեր 2014

Ժամանակակից հայագիտության առանցքային հարցերից է 19-րդ դարի վերջին քառորդում ձևավորված և մինչև մեր օրերը գործունեություն ծավալող հայ ազգային կուսակցությունների պատմության, իսկ Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցի նախօրեին նաև Հայոց ցեղասպանության շրջանում հայկական կուսակցությունների գործունեության ուսումնասիրությունը:

Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցության գործունեությանը նվիրված արժեքավոր ուսումնասիրությունների շարքը լրացնելու է գալիս դոկտոր Աբել քահանա Մանուկյանի «Հայրենիքի ազատագրութան բանակին համոզուած զինուորները» գիրքը: Հնչակյան կուսակցության պատմության համար կարևորագույն երկու դրվագներին՝ 1887թ. կուսակցության հիմնադրմանը և 1915թ. հունիսի 15-ին Կ. Պոլսում Հնչակյան քսաներկու գործիչների կախաղանին նվիրված հետազոտությունն իրականացված է Հայոց պատմությանը միահյուսված: Գրքում շրջանառված նորահայտ փաստաթղթերը և մամուլի՝ մոռացությունից դուրս բերված վկայությունները նոր լույս են սփռում Հայաստանի 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին քառորդների պատմության բախտորոշ իրադարձությունների վրա:

Գրախոսություն

Դոկտ. **Արմենուհի Կոստանյան**, Մարբուրգ, Գերմանիա, 19 Նոյեմբեր 2014

Ժամանակակից հայագիտության առանցքային հարցերից է 19-րդ դարի վերջին քառորդում ձևավորված և մինչև մեր օրերը գործունեություն ծավալող հայ ազգային կուսակցությունների պատմության, իսկ Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցի նախօրեին նաև Հայոց ցեղասպանության շրջանում հայկական կուսակցությունների գործունեության ուսումնասիրությունը:

Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցության գործունեությանը նվիրված արժեքավոր ուսումնասիրությունների շարքը լրացնելու է գալիս դոկտոր Աբել քահանա Մանուկյանի «Հայրենիքի ազատագրութան բանակին համոզուած զինուորները» գիրքը: Հնչակյան կուսակցության պատմության համար կարևորագույն երկու դրվագներին՝ 1887թ. կուսակցության հիմնադրմանը և 1915թ. հունիսի 15-ին Կ. Պոլսում Հնչակյան քսաներկու գործիչների կախաղանին նվիրված հետազոտությունն իրականացված է Հայոց պատմությանը միահյուսված: Գրքում շրջանառված նորահայտ փաստաթղթերը և մամուլի՝ մոռացությունից դուրս բերված վկայությունները նոր լույս են սփռում Հայաստանի 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին քառորդների պատմության բախտորոշ իրադարձությունների վրա:

Գիրքը բաղկացած է երկու հիմնական մասից: Առաջին՝ «Ժընեւ եւ Հնչակեան կուսակցութեան կազմաւորումը» ընդարձակ հատվածում քննության է ենթարկվում Ժնևում Հնչակյան

կուսակցության սկզբնավորման և հիմնադիրների, հատկապես՝ Ավետիս Նազարբեկյանի, Մարո Վարդանյան-Նազարբեկյանի, Գաբրիել Կաֆյանցի և Ռուբեն Խանազատի, ինչպես նաև կուսակցության պաշտոնաթերթի՝ «Հնչակ»-ի ստեղծման և տպագրության վերաբերյալ արխիվային նորահայտ փաստաթղթեր: Շվեյցարիայի Համադաշնության պետական, Ազգային գրադարանի, Ժնևի պետական, Համալսարանի արխիվներից, ինչպես նաև՝ Հայաստանի ազգային արխիվից հավաքագրած նյութերը հեղինակը համադրել է արդեն հայտնի փաստերի և խնդրո առարկա թեմային առնչվող սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների հետ:

Այս առթիվ ի հայտ են եկել խիստ հետաքրքրական մանրամասներ Ավետիս Նազարբեկյանի և Մարո Վարդանյանի մասին: Շվեյցարական արխիվներում հեղինակի հայտնաբերած ամենահին գրավոր վկայությունը վերաբերում է նրանց՝ իբրև արտասահմանյան քաղաքացի կեցության իրավունք ստանալու առթիվ կատարված գրանցմանը (31 մարտ, 1888թ.): Ճշգրտված է նրանց քաղաքացիական ամուսնության թվականը (18 ապրիլ, 1888թ.), այնուհետև Փարիզում Պսակադրության արարողության ժամանակահատվածը (1889թ. օգոստոս), Ժնևում նրանց բնակության հասցեները: Որոշակիացվել է Հնչակյան կուսակցության հիմնադիրների պատմական խմբակարի (գետեղված է գրքի շապիկին) ստեղծման հստակ վայրը եւ մոտավոր ժամանակը (1887թ., օգոստոս-նոյեմբեր) և այլն: Առանձին մի ենթավերնագիր նվիրված է Հնչակյան գործիչներից Գաբրիել Կաֆյանցին: Ներկայացված են նորահայտ փաստաթղթեր և նամակներ Շվեյցարիայում նրա գործունեության, այնտեղից նրա՝ որպես հեղափոխականի վտարման վերաբերյալ:

Գրքի երկրորդ հատվածի խորագիրն է՝ «Թարմ հողակույտերուն առջեւ. 100 տարի առաջ՝ Չուիցերիոյ մամուլն ու Հնչակեան քսան կախադանները»:

1915թ. հունիսի 14-ին թուրքական ռազմական դատարանի վճռով Հնչակյան Քսաներկու կարկառուն գործիչներ դատապարտվում են մահվան. մահապատիժը իրագործվում է հունիսի 15-ին Կ. Պոլսի Սուլթան Պայազիտ հրապարակում: Մինչ բուն նյութին անցնելը հեղինակը համառոտ ակնարկով անդրադառնում է Համիդյան ջարդերին և 1894-1897 թթ. շվեյցարացիների՝ հայ ժողովրդին ցուցաբերած զորակցությանը, մարդասիրական օգնություններին. Շվեյցարիայի շատ քաղաքներում կազմակերպվել են բողոքի ցույցեր, ստորագրահավաքներ, նյութական հանգանակություններ, Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում հիմնվել են հիվանդանոցներ, որբանոցներ և կրթօջախներ: Անդրադարձ է կատարվում շվեյցարական լրագրության և մամուլի պատմությանը: Առանձին պարբերություններում ներկայացվում է Օսմանյան կայսրությանը և երիտթուրքերի գործունեությանը, մասնավորապես 1908 թ. հեղաշրջման վերաբերյալ շվեյցարական մամուլի դիրքորոշմանը:

Հատկապես հուզիչ է շվեյցարական «Ֆոլքսրեյխ» թերթում Ադանայի 1909թ. սահմուկեցուցիչ իրադարձությունների վերաբերյալ անդրադարձները. 1909թ. ապրիլի 24-ի ամսաթվով լույս տեսած հոդվածում նշվում է, որ Ադանան ամբողջապես մոխրացած է, կործանված են ամերիկացիների և եվրոպացիների կողմից հաստատված մարդասիրական հաստատություններն ու միսիոներական կենտրոնները, ջարդերից մազապուրծ փրկված հայերը մնացել են անօթևան և սոված (Էջ 80): «Ֆոլքսրեյխ»-ը շվեյցարական առաջին թերթն էր, որը 1915թ. մայիսի 10-ի տեղեկագրությամբ

անդրադարձավ Վանի հերոսական ինքնապաշտպանությանը: Դրանից երկու շաբաթ անց մեկ այլ՝ «Լա Սանթինել» թերթում խոսվում է հայերի բռնի տեղահանությունների և համատարած կոտորածների մասին՝ եզրակացնելով, որ «Ցեղի մը բնաջնջումը մոտալուտ է» (էջ 87):

Հեղինակը պրպտումների արդյունքում պարզել է, որ Հնչակյան Քսան կախաղանների ողբերգական իրողության մասին առաջին անգամ հիշատակվում է «Լա Սանթինել» թերթում տպագրված «Վհաբեկչությունը Թուրքիայում» խորագրով հոդվածում: Նույն թերթը տեղեկացնում է հայ հեղափոխական այլ կուսակցությունների, մտավորականների ձերբակալությունների և դեպի Օսմանյան կայսրության խորքերը աքսորի մասին:

Գրքում մանրամասն վերլուծվում են «Պեռներ Թակվախթ» թերթի՝ «Դահիճը կ'իշխե» և «Ֆոլքսրեխթ»-ի՝ «Թարմ հողակույտերուն առջեւ» խորագրերով հոդվածները: Դրանց համեմատությամբ հաստատվում է, որ «Պեռներ Թակվախթ»-ի տպագրած հոդվածը կրճատված և վերախմբագրված տարբերակ է, մինչդեռ «Ֆոլքսրեխթ»-ում տպվածն առավել ընդարձակ և ամբողջական է: Հոդվածի հեղինակը հայ սոցիալ-դեմոկրատ հայտնի գործիչ Արշակ Չուրաբովն է: Աբել քահանա Մանուկյանն այս հոդվածը որակում է իբրև «լրագրական արուեստի փայլուն նմոյշ» (էջ 110), ամենայն մանրամասնությամբ քննության ենթարկում հոդվածի բովանդակությունը, նրանում արծարծվող տարաբնույթ քաղաքական հարցերը: Շուրջ հինգ ամիս անց «Ֆոլքսրեխթ» թերթում տպագրված «Օգնութեան աղաղակ մը Հայաստանէն» խորագրի ներքո Հնչակյան Քսան կախաղանների առթիվ ներկայացված է Ժնևի վրացի ուսանողների հեղինակած սրտառուչ նամակը՝ ուղղված Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ատենապետին: Շահեկան է, որ այս նամակները թարգմանաբար զետեղված են գրքի մեջ և կարող են որպես սկզբնաղբյուր օգտակար լինել ուսումնասիրողների համար:

Գրքի վերջում առկա է հավելված՝ «Հնչակեան Քսան Կախաղանները կայսերական Գերմանիոյ մամուլին մէջ» խորագրով: Այստեղ ուշադրության է արժանի գերմանական «Քրիստոնէական աշխարհ» պաշտոնաթերթի 1915թ. հուլիսի 29-ի համարում հրատարակված գերմանացի հայասեր Էվալտ Շօրի հոդվածը, որը «Օսմանեան Թուրքիոյ քաղաքական կացութեան, երիտթուրքերու հետապնդած հայակործան քաղաքականութեան եւ մեծ տերութիւններու երկդիմի, բայց ի վերջոյ ապարդիւն դիւանագիտութեան խորաթափանց վերլուծում մըն է» (էջ 148): Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Կայսերական Գերմանիայի մամուլի ամբողջովին գրաքննության ենթարկվելու պայմաններում այս հոդվածն իրապես եզակի է:

Այսպիսով, դոկտոր Աբել քահանա Մանուկյանը կատարել է գիտահետազոտական արժեքավոր աշխատանք՝ ներկայացնելով Հնչակյան կուսակցության ուշագրավ եւ մինչ օրս անհայտ տեղեկություններով հագեցած մի ուսումնասիրություն: Հիմնական նյութը հյուսված է Հնչակյան կուսակցության պատմության երկու դրվագի շուրջ, սակայն ներկայացվող նյութն առավել ընդգրկուն և բազմաբովանդակ է. Հեղափոխական առանձին գործիչների կենսագրական մանրամասներ, մամուլի պատմություն, եվրոպական մամուլում Հայոց ցեղասպանության վերաբերյալ տեղեկություններ և այլն: Այն, անշուշտ, օգտակար կլինի պատմաբանների, քաղաքագետների, մասնավորաբար՝ 19-րդ դ. վերջի և 20-րդ դարասկզբի Հայոց պատմությամբ հետաքրքրվողների

համար:

Վերջում կցանկանայինք առանձնահատուկ կարևորել գիտական այս ուսումնասիրության գեղարվեստական և գաղափարախոսական նշանակությունը: Աբել քահանա Մանուկյանը պատմական իրողությունները ներկայացրել է իրեն հատուկ «մտերմիկ» և շատ «կենդանի» ոճով՝ ջերմությամբ խոսելով սրճարանի, համալսարանի լսարանների, գրադարանի ընթերցասրահների, ժնեի տարբեր փողոցների ու բնակարանների մասին, որտեղ հանդիպել, ապրել եւ գործել են Հնչակյան կուսակցության հիմնադիրները: Գրքում զետեղված արխիվային փաստաթղթերի, Հնչակյանների գործունեությանն առնչվող պատմական վայրերի լուսանկարները համեմուժ և ավելի տպավորիչ են դարձնում այն: Դրանց շնորհիվ ընթերցողը նույնպես մտովի դառնում է այդ կարևոր իրողությունների ականատեսը և մասնակիցը, և ինչու ոչ՝ *Հայրենիքի ազատագրության բանակի զինվորներից մեկը*:

